

Ռ Ո Մ Ա Ն Ս Ա Ն Ս Ե Ր

ՈՋ ՍԿԻՉԹ

Հաճելի՞ է, չէ՞,
էլի ձեզ
Տերչանի երգը թքոտ:
Բայց
էսօր
հոգիս թող ձեզ լիզի
երկաթե,
թեժ արդուկով:

Մի՞թե
դեռ
ձեր կակուղ հոգում
մշուշն աշո՞ւն է լացկումած
ու ցնո՞րք է ուզում —
հում
ծախու
ձեր հոգին՝ դժուժ հացկատակ:

Իզուր:
Զուր է ուզում:
Սխալվում է:
Ցնորք չկա:
Երբ ջղերն են ճշում անլեզու
ես
թե կուզեք ապրում ու հուզում —
ձեզ կտամ հույզերիս Չեկան:

Ի՞նչ.
չկա՞ն.
չերգած ներկան դեռ —
ի՞նչ.

չունի՞ հնչյուններ հազարս
Ուզո՞ւմ եք՝ գազազեմ,
քանդեմ,
ձեզ կիզող հուզումներ հազամ!
Միթե ձե՞զ նայեմ,
միթե ձե՞զ,
էսօրվա կուզիկ պոետներ,
ձեր անծեր ծրի՞ն մոխիրե:
Դուք,
որ ունեք արյան տեղ—մեզ
ու խլինք—խելքի փոխարեն!

Ձեզ համար ժամանակը կարծես
եզասայլ է մի դեռ երկանիվ—
և որին ձեր հոգին բարձել
քշում եք ներկայիս:

Կարծում եք՝ հենց է՞ս է— չէ՞.
ուզեցի—կերզեմ ոնց որ կա,
խոսքերով նույն նեխած ու ծեր—
երեկ—սեր,
էսօր—շոգեկառք.

Բոցե ձայնը շհասնի ձեզ թող իմ:
Քայց
էի՞
լսո՞ւմ եք—
իմացեք.
բոռում եմ ձեր երկսեռ ուխին.
— բավական է.
վերջ հիմա ձեզ!

Բավական է մեր լեզուն պղինձ
ձեր թքոտ երգերում թրջի,
որ
կակուղ,
ոնց որ կուտ սեխի—
ծամծմեք թթամիտ շարչին!

Բավական է մեր լեզուն ոնգային
ձեր կակուղ ձեռքերում տանջեք:
Շարժե՞լ եք կամենում.

Կին չկա՞

գործածեք հաշիշ, կոկաին,
հասկանում եք՝ գրիչն անդամ չէ:

Ուզում եք մզլի՞,

ժանգոտի՞,

ուզում եք նեխի՞ մեր լեզուն:

Ուզում եք կամ կամպոտ, կամ չի՞ր:

Կամպոտի փոխարեն

էսօր

ձեր կակուղ ծնոտին մոտիկ

թող շաշե երգերիս դամչին!

Բավական է — չէ՞

Չարենց:

Շլացած հանճարիդ փառքով՝

էլ ելի՛ր,

հրդեհե՛,

վառե՛,

վերցրու ցրի՛ր բառ — բոմբ!

Թող թքեն,

թքե թութխալով

կպցնեն,

չինեն տող-տող

«նրբաթել» երգերի խալին

նրբաճիչ երգիչները թող:

էլ ելի՛ր,

ոտմբերն առ քո:

Վշտահար, վշտոտ, վշտունեղ,

անատամ բառերի շարքով

թող Ազաան աղատ-վշտունե՛!

Ուզում եք՝ երգեմ ձեզ սեր,

ցնցումներ էնպիսի ցավի,

որ անցնի,
ձեր հոգին կիսե,
ոնց որ ծանր, բարձած գրուզավիկ!

Հասկանում եք...
սե՛ր,
դեռ չերգած—
և ո՛չ թե երկաթ կամ շոգի—
բայց գիտե՞ք,
էնպես, որ դա
ձեր բկին շոքի!

Բավական է հոգին ձեր ծեր
ցրտահար հուզումներ միզե:
Ես
էսօր
բերեի եմ ձեզ—
X
Y
Z

Ռոմանոս եք ուզում,
կամ ռոմանո՞ն.
ինչո՞ւ չէ. ռոման տամ ձեզ:
Բայց
գիտե՞ք—
ռոման անռոման,
կամ ռոմանս անսեր...

ՍԿԻՉԲ

Ոչ ցնորք ես դու մի դալուկ,
ոչ հոգու մի հրաշք անգո:

Ժենեա,
քե՛զ

մարմինը քո կակուղ
թող երգեմ զանգիս գոնգո՛ւլ:

Գանգը—
գոնգ,
թմբուկ է ահագին:
Միջին—չար մի միջատ:
Եթե գա,
ներքևից թակի—
մինչև մահ ցավից կճչաս:

Ո՞ւլ իմանա:
Ո՞ւլ իմանա:
Ո՞ւլ իմանա:
Նատած ես սուսուփուս:
Քեզուքեզ:
Կգա:
Կբուրե արնահամ:
Մեղկությունդ կրքով կզուքե:

Պառկում ես՝ աչքդ փակես:
Բայց—
կամաց
ոնց որ տուն վատվի՝
ելնելով ուղեղիդ տակից—
Կերեա...
Աղջիկ:
Մարմին:

Աչքեր են:
Շրթունքներ:
Հոնքեր:
Կոնքերի կոնքը կլուս:
Ուզում ես՝ դա՛,
շրթունքե՛—
քեզ,
զրկե՛ս հրկեզ ձեռքերով:

Ի՞նչ հուշ,
Ի՞նչ ցնորք,
Երազ,
լուսնահար տխրություն ու երգ:—
Կգա,
կգգվի նա—շոգ,
շեկ.
վավաշոտ.
է՛գ:

Շո՛ւ:
Շո՛ւ—շո՛ւ:
Մշուշում:
Կշոյե շշուկը—շոգ:
Ոնց որ օձ՝ կկալի կաշուդ:
Շո՛ւ:
Շշալով:
Շո՛ւ:

Ու քո շոգ,
ճնշող կոնքերում,
որ ցավից կուռչեն,
կկապտեն—
կվառե ցանկությունն անգութ—
մի կարմիր լապտեր...

Եվ էլ ի՞նչ.
էլ ի՞նչ.
էլ ի՞նչ.
Ողջը—հեշ:
Չնշին:
Միջատ:
էլ—ե՛լ.
Փաթաթվիր թևիդ.
Ճշա՛.—

— Ժե՛նեա

քե՛զ.

ուզո՞ւմ եմ քե՛զի:
Օրերի սարսափը դեմքիս՝
գամ,
տամ,
արնահամ կիսե՛ս.
կործանես հիմքից:

Ոնց որ շար մի պառավ շագու
բարձրանա խարույկ—
հանգիստ
դու եկար
ժենեա,
դու—
բարձրացար գանգիս:

Ու թակեց,
Ու թակեց տակից
Ոնց որ խուլ ահազանգ գանգի,
Ոնց որ քար՝ կամքիս հատակին
Դղրդաց գոնգը գանգիս:

Լսո՞ւմ ես.
կանչում է—քե՛զի:
Որ լսես,
ուզես,
որ գա՛ս:
Ասել է որ գանգը
կեզ
դարձել է— կա՛ս:

Լսո՞ւմ ես՝ ասում եմ—«Սեր»,
բայց
ծամած այդ բառը որ ասի—
ասել է ուզում եմ—քեզ.
և ո՛չ թե—լիզած լուսին:

Ուզո՞ւմ ես՝
ողնաշարս թևքեմ,

որ—
ոնց որ զսպանակ թեքած
թոցնի նա թե ինձ, թե՛ քեզ—
թե գաս...

Եթե գաս,
երևաս եթե—
մինչև թեժ աստղերի հեռուն
կթռչի,
կտանի թեթև
կրքերիս կարմիր անրոն!

Հասկանո՞ւմ ես՝
դուրս կսահի
կրքերիս ահռելի հորդան,
ոնց որ երգ—ցնդած Իզայի
հանձարեզ մատներից հորդած...

Հասկանո՞ւմ ես՝
ինչո՞ւ.
ինչի՞ց:
Այս բռլորը—շնչի՞ց միթե քո:
Եթե սերը—կիրք է շնչին՝
թող
ծածկեմ քեզ շնչիս մութաբով.

Հուզո՞ւմ է.
Ձե՞ռ ուղում— չէ՞.
պահվո՞ւմ ես, ոնց որ գանձ անգին...
էլ
Քեզ ո՞վ,
էս ո՞վ կանչեց,
որ եկար նստեցիր գանգիս...

Լսի՛ր,
 դո՛ւ,
 սի՛րտ իմ արդուկ.
 Հասկանո՞ւմ ես՝ ճամփեդ թեքի:
 Էն
 մա—
 սին
 ի՞նչ ասես դու,
 թե ասի՛ մասն եմ մեկի!

Մաս:
 Մսի:
 Մսե:
 Ամուսին:
 Հասկացա՞ր. կեկել մեկելի!
 թե ուզե՛ կնստի ուսին,
 կզրկե էլի!

Գու կարող ես հուզվել,
 դազազել,
 դու կարող ես ցնդել,
 իսկ նա—
 սնց որ հացը՝ հանգիստ կկիսե
 քո հոգին հոգնած:

ժենեա,
 ինձ.
 լսո՞ւմ ես ինձ:
 Հասկացի՛ր:
 Լսի՛ր:
 Անսա՛:
 Թող:
 Թ՛քիր քո կակուղ կեսին:
 Հասկանո՞ւմ ես՝
 այ—
 սա:

Հասկանո՞ւմ ես՝ վերցնեն ոնց որ
չքերած մի գերան փայտի—
ու ցցեն քո կոկորդը շոր,
ու խփեն երկաթե մուրճով,
մինչև սիրտդ, ոնց որ թուփ պայթի:

Հասկանո՞ւմ ես
էստեղ ես հասցրեի:
Կախվել ես
տես
թևիս—
և ի՞նչ.
«սեր»
«զերո»
«երազում սիրել»—
իմ վզին դեիզ:

Ի՞նչ է.
Ի՞նչ իմացար.
Կարծում ես՝ Տերյա՞նն եմ թէն:
Ճիշտ է.
շաղել եմ «Տաղեր»,
«Ծիածան»,
Քայց—թքել եմ դրանք արդեն դեն:

Հանգե՞ր են շարել մինչև էս,
քնարել ցնորքներ կակուղ.
Բայց
հանգով
ո՞նց հնչեղես,
եթե սերդ է—նավթածով Բագու:

Հուլյե՞ր ես ուզում, որ հուզեն
թե հոգի,
թե սիրտ,
թե բումբ:
Իսկ եթե պայթե՞ն հուլյերը— դեն,

իսկ եթե պայթե՞ն հուլզերը—զենք,
հուլզերը մատուցեր,
բումբ,
ոումբ:

Լսի՛ր,
սե՛ր,
քե՛զ եմ ասում.
Կարծում ես կաղաչե՞մ կամ կուզե՞մ:
Կգամ:
Գիշերվա կեսին
կպայթեմ, ոնց որ ումբ հուլի:

Ես տեսել եմ հրդեհ,
պատերազմ,
սպիտակ ու կարմիր զորքեր—
և ոչինչ:
Կամ:
Չմեռա:
Որ քեզ...

Հասկանո՞ւմ ես:
Կգամ գիշերով:
Աչքերիս աֆիշին խանդոտ
զզվելի ժպիտի տեղ սիրո
կկարդաս—«Կինտո»:

Կընկնեմ,
ոնց որ քար նետած:
Կքաշեմ,
կզցեմ մահճիդ:
Հասկանո՞ւմ ես կամքը վստահ
քեզ սիրող դահճի:

Լսո՞ւմ ես.
Կամ հա, կամ չէ:
Հասկանո՞ւմ ես.

կամ սեր, կամ քիթ:

.

«Յնդած»:

Զողջանքով կանչեց:

Հոհոաց դեմքիս:

Աչքերը գեր մի մկի՝

ցատկեց դեն, ոնց որ էդ կատու:

Ես

ասաց

մասն եմ մեկի.

իսկ դո՞ւ:

Կատու:

է՛դ մի կատու:

Ոսկեզօծ:

Ոսկեպատ:

Ոսկե:

Կթռչի—

կգնա Բաթում:

Իսկ ե՞ս:

Ե՞ս...

Իջնեմ,

հավաքեմ գետնից

կրքերիս միրգը թափած:

Միայն թե զիշերի,

մթնի...

Ես— փաս!

Կշարեմ,

ոնց որ ձուկ խաշած,

և.—

կինտո,

անթով խափշիկ—

փողոցի մայթին թամաշա

կտանեմ կրքերիս թեփշին:

եվ...

Եթե մուշտարին թանգի—
փողոցի անփող քոծերին
կրքերիս միրգը անդին
կցրեմ ձրի...

Սե՞ր:

Ջերմ:

Ոնց որ դաս ճաշարան—
չմարսես.

ծանրանա սրտիդ:

Հասկանո՞ւմ եք՝ էսքան հասարակ
և էսքան խրթին:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋ

Կարծում եք՝ հաճելի՞ է—չէ՞:

«Սեր»:

«Կարոտ»:

«Աչքերի գինի»:

Իսկ եղե՞լ է որ՝ կանչեք—

և լինի...

Ու՛րիշ չլինի:

Ձեզ երգել են ցնորք,

ծիածան,

ժպիտներ կապույտ ու դեղին:

Իսկ եղե՞լ է՝ գա,

գազազած

վերցնի թքի ձեր բերին:

Իհարկե,

հե՛շտ է սիրել:

Կարուսել:

Լուսին մեկուսի:

Իսկ թափվե՞լ են ձեր—

հույսե՛րը ձեր—

ոնց որքի մազերը—քոսից:

Օ, թողե՛ք,
թքե՛ք լուսնին:
Ոչ աղջիկ է նա կույս, ոչ կին:
Թե կուզեք որ կուզ շքուանի
ձեր հոգու մեջքին:

Թո՛ղ,
Չարե՛նց,
փողո՛ց գնա մի:
Գազազած՝ բթադեմ մայթին
էլ վառի՛ր: Հողիդ գինամիտ
թող
տոթ
սլայթի:

Տա՛ր,
տո՛ւր
տրուբադուր դարձած
առաջին աղջկան անքիթ—
քո հոգին՝ ավելի՛ սլայծառ,
քան հազա՛ր ազամանդ անգին:

Հասկացի՛ր,
սի՛րտ իմ բիրտ,
վերջ:
Յնորք չիք:
հասկացի՛ր,
անքիթի քացին
ավելի է «լուսե»
«աստղածին»
քան հազար «երազե աղջիկ»:

«Յնո՞րք» է:
Կգամ:
Մկանոտ:
Եվ—
երբ նա հանվի—

Էս

դիտեմ

կզգամ ձկան հոտ,

ոնց որ ինձ Հայկոսկիայ տան մի:

Կպառկի

«ցնորբը» —

Ես էլ:

Եվ

կակուղ

երբ խանդից հալի —

ոնց որ հացը՝ հանդիստ կկիսեմ:

Նա կասե՛ էլի՛:

Հետո —

կնետեմ ճզմած:

Թող խանդից նա կծե լեզուն:

Սե՛ր,

էսօր

բերել եմ քեզ — մահ,

Էս — հունն:

Հույզե՞ր են. թող զա՛ն, եթե կան.

բռնեմ —

շարտեմ դեն.

Մոսկովից մինչև վատիկա՛ն.

Թող հորդեն — դե՛:

Ո՛չ:

Չկա՛:

էլ չկա աղջկա

թովչական մահճակալը ճկուն:

Հույզե՞ր են՝ թող զան, եթե կան,

թող դառնան շոգի հոգեկան,

թող հալեն շուգուն:

Ի՞նչ երգ,

Ի՞նչ կրքեր,

գրկել,
համբուրել—բուրել—թքաբույր—
երբ
հարբած
քաղաքներն հրկեզ
մերձենում են թաբուն-թաշուն:

Ի՞նչ ձայն,
Ի՞նչ կոկորդ մեկի
կարող է հիմա հող քանդել—
երբ
չորած աշխարհքի բկին
միլիոններն են ահկել հանդես:

Եկե՛ք,
Թե կուզեք հուզեմ:
Թե կուզեք շմնաք անկուզ:
Ձեզ
տամ
էնպիսի մի սեր,
որ լիզե—ցամաքի Ձանդուն:

Դե— եկե՛ք, աղջկներ անքիթ:
Ոնց որ դուք՝ հանձնվեմ շարքով:
Ձեզ,
մարդիկ,
որ տվիք կյանքին—
զանգ,
քիթ,
կոնք:

Եկե՛ք:
Ձեզ կտամ մարմին:
Ձեզ կտամ թե քիթ, թե դեմք:
Եվ հոգի՝ կարմիր,
Հոկտեմբեր:

Եկե՛ք:
Մոտեցեք վստահ:

Երգերով հոգին ձեր քերեմ:

Եվ

կուզե՞ք—

զանգս ձեզ տամ,

— Առե՛ք ե՛ք՝ ք կերեք.

P. S

Միժաղո՞ւմ եք:

Իհարկե դե...

Ն՞ս—

պոետ,

«երկաթե»

«կարմիր»

և

հանկարծ

երգի տեղ երկաթե—

կիրք,

կոնք,

կին:

Զգիտեմ:

Բայց գիտեմ հաստատ,

Հավատում եմ,

զգում եմ, որ նա

իմ

վերջին

շնչին նստած

պիտի վեր համբառնա!

Ընթերցումից հետո

Չարենցը մեռա՞վ.

Մեռավ:

Նոր պոետ ծնվի որ մի:

Թքած թե թերթերի վրա

Իշաբար շարեն Ողորմի:

1922